Գյումրի համայնքի ղեկավար

Վ. Սամսոնյան

Հարգելի պարոն Սամսոնյան

Հայտնում եմ Ձեզ, որ նախատեսում ենք Շիրակի մարզի Գյումրի համայնքի Բուլվարային թաղամասի և աղբավայրի միջև ընկած հատվածում , կառուցել կենցաղային թափոնների վերամշակման գործարան:

Դիմում ենք Ձեզ << Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի << Հանրային ծանութման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին >> N 1325-Ն որոշման հավելվածի համաձայն (առաջին փուլ) նախատեսվող գործունեության վերաբերյալ ծանուցման և հանրային քննարկում կազմակերպելու համար:

Խնդրում ենք Ձեր հանձնարարականը համաձայն նշված կարգի 14-րդ հոդվածի տաս աշխատանքային օրվա ընթացքում շահագրգիռ հանրության ծանուցում իրականացնելու համար: Աջակցել և ապահովվել մասնակցությունը հանրային քննարկումների , դրանց արձանագրությունը, տեսաձայնագրությունը կամ լուսանկարները, ինչպես նաև արված առաջարկություններն ու դիտողությունները << Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն >> ՊՈԱԿ – ին ներկայացնելու համար:

Կանխավ շնորհակալություն :

<< ԱրմԷկոՏեկ>> ՍՊԸ Տնօրեն՝ Բաղին Միխաիլ

19. 04. 2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆ

ՀՀ Շիրակի մարզ 05 հունիս, 2024 թ.

Քաղաք Գյումրի, Վարդանանց հր.1 ժամը՝ 15:00

2024 թվականի հունիսի 5-ին, ժամը՝ 15:00-ին, Գյումրու համայնքապետարանի վարչական շենքում (Վարդանանց հր. 1, 2-րդ հարկ, ավագանու նիստերի դահլիճ) կայացավ հանրային բաց լսում և քննարկում (այսուհետ քննարկում):Նիստը վարեց Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Ջանոյանը:

Քննարկման թեման՝

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Բուլվարային թաղամասի և աղբավայրի միջև ընկած հատվածում կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցում.

Նախաձեռնող և զեկուցող՝ «ԱրմԷկոՏեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Միխաիլ Բադին:

Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ

Սուրեն Ջանոյան

-Բա՛րև ձեզ հարգելի՛ մասնակիցներ: Սկսում ենք մեր հանրային բաց լսում և քննարկումը:Տեղեկացնեմ, որ համաձայն կարգի, հանրային քննարկման մասնակիցը քննարկման դրված հարցերի վերաբերյալ կարող է ուղղել հարցեր, իր առարկություններն ու առաջարկությունները հնչեցնել բանավոր ձևով կամ՝ դրանք գրավոր տեսքով ներկայացնել հանրային քննարկման քարտուղարին: Մասնակցիները կարող են իրենց առարկություններն ու առաջարկությունները ուղարկել Համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեին՝ gyumri@gyumri.am կամ գրավոր տեսքով ներկայացնել քննարկման քարտուղարին քննարկման ավարտից հետո՝ հնգօրյա ժամկետում:

Զեկուցող՝«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի (Enterprise Armenia) հիմնադրամի. ներդրումների խթանման և արտաքին կապերի մենեջեր Էլինա Կարապետյան:

-Շատ հաճելի է: Այսօր մենք հավաքվել են այստեղ քննարկելու «ԱրմԷկոՏեկ» ներդրումային ծրագիրը:Ծրագրի շրջանակում նախատեսվում է ներդնել մոտ 9 մլն դոլար՝ ստեղծելով մոտ 50 աշխատատեղ:Ծրագիրն իր մեջ ներառում է ստեղծել աղբի վերամշակման գործարան:Նշեմ, որ «ԱրմԷկոՏեկ» կազմակերպությունը ռուսաստանյան «ԷկոՏեկ» կազմակերպության ներկայացուցիչն է Հայաստանում, որը զբաղվում է աղբի վերամշակման սարքավորումներ արտահանելով:Այս ծրագրի շրջանակում բացի նրանից, որ ներդրվելու է 9 միլիոն, նախատեսվում է նաև կազմակերպել համայնքի ամբողջ աղբի վերամշակումը, ինչպես նաև աղբահանության պրոցեսը:Աղբահանության պրոցեսն իր մեջ ներառելու է ամբողջ համայնքի աղբահանությունը, թարմացվելու է նաև ամբողջ աղբահանության մեքենաների պարկը:Ծրագրի շրջանակում ստեղծվելու է մոտ 50 աշխատատեղ, բերվելու են բարձրակարգ մասնագետներ այլ երկրներից: Նախատեսվում է նաև վերապատրաստել համայնքի բնակչությանը:

Ներդրողը, նաև նախապատրաստվում է իր գործունեությունը ծավալել Գյումրի համայնքում: Մոտ ապագայում նախատեսում ենք ընդլայնվել և ներառել համայնքի հարակից շրջանները՝ օրինակ Ախուրյանը:Եվ հարկ ենք համարում նշել, որ այս ծրագիրը տարածաշրջանում նմանը չունեցող ծրագիր է լինելու և շատ ուրախ ենք, որ այս ծրագիրը լինելու է հենց Գյումրի քաղաքում, որովհետև ոչ միայն լուծվելու է տարածաշրջանի աղբահանության հարցը, այլև ստեղծվելու են աշխատատեղեր:Այս ամբողջ գործընթացը կազմակերպվելու է նոր սարքավորումներով, որոնք տրամադրելու է «ԷկոՏեկ» կազմակերպությունը:Հարկ եմ համարում նշել, որ այս ծրագրի նախաձեռնող Միխաիլ Բադինը հանձն է առնում ակտիվ մասնակցություն ունենալ համայնքի սոցիալական ծրագրերում, նա նախատեսում է մասնակցություն ունենալ նաև կանաչապատմանը վերաբերող ծրագրերին:

Շրջակա միջավայրի համար սա շատ կարևոր ծրագիր է, որովհետև այն գործողությունները, որոնք որ ծավալվելու են, 0% ազդեցություն կունենան համայնքի համար:

Հարց՝

«Վանանդ» ՀԿ նախագահ

Համլետ Ղազարյան

-Գյումրի քաղաքում իրականացվել են մի շարք ծրագրեր, սակայն այդպիսի մասշտաբի ծրագիր չի իրականացվել:Կար մի ծրագիր, որն իրականացնում էինք Վանաձոր և Պիլա քաղաքների հետ:Արդյո՞ք տեղյակ եք այդ ծրագրից, և եթե տեղյակ եք, ապա ինչպիսի՞ հարաբերության մեջ եք այդ ծրագրի հետ, որովհետև իրենք էլ էին ուզում գործարան կառուցել:Արդյո՞ք կոնֆլիկտներ չեն առաջանա:

Պատասխան՝

«Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի (Enterprise Armenia) հիմնադրամի. ներդրումների խթանման և արտաքին կապերի մենեջեր Էլինա Կարապետյան:

-Մենք քաջատեղյակ ենք այդ ծրագրից:Նշեմ, որ այս ծրագրերն իրար հետ ընդհանրապես կապ չունեն:Որևէ կոնֆլիկտ չի լինելու, որովհետև այստեղ մենք վերամշակելու ենք ամբողջ աղբը:

«ԱրմԷկոՏեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Միխաիլ Բադին

-Բարև ձեզ: Ես տեղյակ եմ Գյումրիում իրականացվելիք այդ ծրագրից:Խոսքը չնչին ծավալների մասին է:

Իրենք ի՞նչ ճանապարհով էին պատրաստվում հումքը հավաքել, ծրագիր ներկայացրե՞լ են:

Պատասխան՝

-Այս պահին չեմ հիշում, բայց կարող եմ ասել, որ Գյումրիում տեղադրվել են աղբամաններ, որտեղ հավաքվում է այդ աղբը:

«ԱրմԷկոՏեկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Միխաիլ Բադին

-Մեզ ընդհանրապես կուտակային զոնաներ պետք չեն, եթե ասում ենք աղբի վերամշակում, դա նշանակում է իսպառ վերացում:Աղբավայր չենք ունենալու, ասեմ ավելին՝ ձեր ունեցած աղբավայրից էլ հետզհետե ձերբազատվելու ենք:

Մենք կարող ենք մեր գործունեությունը ծավալել քաղաքի կենտրոնում, բայց կա ՇՄԱԳ-ի կանոնակարգ, որը պահանջում է 300-500 մետր հեռավորություն պահպանել բնակչությունից:

Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի

քարտուղար Կարեն Բադալյան

-Երբևէ ծավալե՞լ եք նմանատիպ գործունեություն, փորձ ունե՞ք:

Պատասխան՝

-Մենք ՌԴ-ի Պետրոգրադ քաղաքում ունենք կոնկրետ գործող գործարան, որն աշխատում է ոչ միայն ինսիներացիայով, այլ նաև պերոլիզով:

Տարածաշրջանի աղբը հավաքում ենք մենք:

Հարց՝

Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ

Հենրիկ Գասպարյան

-Ինչու՞ որոշեցիք գործարանը կառուցել Գյումրի քաղաքում:

Պատասխան՝

-Երևանի թույլտվությամբ և Երևանի առաջարկությամբ, ինչպես նաև մեր ցանկությամբ ընտրվել են Գյումրի և Վանաձոր քաղաքները:

Բացի այդ տարածքային կառավարման նախարարությունից տեղեկացանք, որ Գյումրին իրոք ունի էկոլոգիական խնդիր աղբահանության հետ կապված:

Նշեմ, նաև որ մենք աշխատելու ենք Գյումրու համայնքապետարանի հետ:Վերջինս ունի իր մասնաբաժինը:

Հարց՝

«Վանանդ» ՀԿ նախագահ

Համլետ Ղազարյան

-Աղբի վարձավճարի չափի փոփոխություն նախատեսվու՞մ է:Իմ կարծիքով աղբահանության որակի բարձրացումը կարող է ենթադրել նաև վարձավճարի թանկացում:

Պատասխան՝

-Օրենքով նախատեսված թանկացումները մեզ հետ ընդհանրապես կապ չունեն:Օրինակի համար ասեմ, որ եթե համայնքի բնակչությունն աղբի դիմաց վճարել է X գումար և այդ աղբը թափվել է մի վայրում,ապա մեզ վճարելու դեպքում բնակչությունն իսպառ կազատվի աղբից:

Հարց՝

Քաղաքացի

-Շատ հաճախ կենցաղային աղբից բացի աղբամանների մոտ լցնում են նաև այլ տեսակի աղբ:Այդ դեպքում ո՞ր կազմակերպությունն է պարտավորվում մաքրելու տվյալ տեսակի աղբը:

Պատասխան՝

-Ինչպես ներկայացված է մեր ծրագրում, դա չի մտնում մեր պարտականությունների մեջ:Ամեն դեպքում այդ հարցը պետք է և՛ քննարկենք, և՛ լուծենք համայնքի հետ միասին:

Ծրագրի իրականացման երաշխիքները տոկոսային արտահայտությամբ ի՞նչ չափով եք գնահատում, որ հստակ կիրականացնեք Ձեր կողմից առաջարկված ծրագիրը:

Պատասխան՝

-Եթե խանգարող հանգամանքներ չլինեն՝ 100%:

Հարց՝

Քաղաքացի

-Ֆինանսական աղբյուրները տեղի հայաստանյան ներդրող ընկերությունների կողմից են, թե՞ արտասահմանյան:

Պատասխան՝

Հիմնական ներդրողը ռուսաստանյան «Էկոտեկ» կազմակերպությունն է:

Հարց՝

Քաղաքացի

-Ձեր ծրագրով նախատեսված է նաև թարմացնել աղբահանություն կատարող տրանսպորտային պարկը:Տրանսպորտային միջոցներն ամբողջությա՞մբ են շահագործվելու:

Պատասխան՝

-Գյումրի համայնքի ղեկավարի խոսքով համայնքում տվյալ պահին աղբահանության հետ կապված խնդիրներ չկան: Եթե ներկա պահին ձեր տրանսպորտային պարկի մեքենաները բավականացնում են, ապա մենք կօգտվենք դրանից և միգուցե 2 ավտոնմեքենա էլ մենք կտրամադրենք:

Հարց՝

Քաղաքացի

-Ծրագրում կա՞ն նշված օդի և շրջակա միջավայրի վրա դրական ազդեցության դրույթներ:

Պատասխան՝

-Ծրագրում մանրամասն ներկայացված են:

Առաջարկություն՝

Քաղաքացի

-Առաջարկում եմ օգտագործել համայնքի աղբավայրում տարիների ընթացքում կուտակած աղբը:

Պատասխան՝

-Մեր կազմակերպությունն աղբի քանակի հետ կապված խնդիր չունի, և եթե այդ գործընթացը վերցնի իր վրա, այդ դեպքում դա կդրսևորվի որպես բարի կամքի դրսևորում:

Հարց՝

-Որքա՞ն ժամանակ կպահանջվի գործարանի կառուցման համար:

Պատասխան՝

- ՇՄԱԳ-ի լիցենզիաները ստանալուց հետո 6-9 ամիս:

Հանրային քննարկումն ավարտվեց, քննարկմանը ներկա էին 21 անձ:

Աշխատակազմի քարտուղար **Կ.ԲԱԴԱԼՅԱՆ**

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ